

ՉՁԱՆԱԳՈՐԾԵՍ ՆՄԱՆԴ

Անօրէն եւ չար մոլութեան տէր մարդը, փոխանակ տոկոսներէն երկիրա-ծուրեւամբ հեռանալու, մեծ ցանկութեամբ կը մտերմանայ տոկոսներու շահին հետ, որը կը ցրուէ իր ուշադրութիւնը, որպէսզի արհամարհէ Աստուծոյ պատուիրանը, կը շփոթեցնէ սիրտը, որպէսզի ահեղ դատաստանի օրը չյիշէ, միտքը այնպէս մը կը փարացնէ՝ որ չգթայ իր եղբօրը հեծեծանքին վրայ: Կը փակէ ականջներն ու աչքերը ու զինք դիտողներուն արհամարհանքէն չ'ամչնար, այլ՝ թշուառ հոգիին համար համարձակ կերպով յաւիտեանական հուր կը հաւաքէ եւ կը դիզէ: Ու ինչպէս, որ երկրագործները կ'աղօթեն եւ կ'աղերսեն Աստուծոյ, որպէսզի անձրեւ տեղայ ցանուած սերմերուն վրայ, նոյնպէս ալ վաշխառուն, աղփատութիւն, նեղութիւն եւ սով կը ցանկայ բոլորին, որպէսզի տուած դրամի տոկոսին փոխարէն, մարդոց ստացւածներուն տիրանայ: Դրամը փոխ տուած ժամանակ զուրթերես է, իսկ երբ տոկոսի պայմանաժամը հասնի եւ նկատէ պարտապանին աղփատութիւնն ու շփոթանքը, անգուր կը դառնայ, աղաչողին երդումին չի հաւատար ու նեղութեան մէջ գտնուողին աղերսանքի երբեք զիջում չի կատարեր, այլ՝ կը դառնայ անողոք ու անզիջող եւ պարտապանը կը նկատէ, որպէս իր ծառան: Կը քննէ, գիտնալու համար, թէ պարտապանը ինչ ինչքեր ունի, որոնք կրնան իրը ըլլալ, կը հետազօտէ, թէ ուր տարած եւ պահած է զանոնք, բազմութեան մէջ կը նախատէ, սիրելիներուն մօտ կ'ամչցնէ եւ հանրութեան մէջ կը չարչարէ:

Յովնան Մանդակունի

ԱՐԾԻՒ ԳՈՐԳ



50-75 սմ. տրամագիծ ունեցող եւ արծիւի պատկերով կտր գորգ մըն է, որ կը դրուի կաթողիկոսական գահին առաջամասը: Անոր վրայ կը կենայ կաթողիկոսը:

Այս գորգը երբեմն հիւսուած կ'ըլլայ նրբարուեստ կտաւի վրայ:

Արծիւը երկինքի թռչնագգիներուն թագաւորը նկատուած է եւ ամենէն բարձր նախորդ թռչունը:

Այս գորգի գործածութիւնը վերապահուած է կաթողիկոսներուն, կը դրուի հոն, ուր կաթողիկոսը կը նստի կամ կը կենայ՝ փարոզելու եւ պատգամելու:

Եպիսկոպոսական ձեռնադրութեան ընթացքին, Ձեռնադրութեան Մաշտոցը կը հրահանգէ ընծայել եպիսկոպոսացուներուն յառաջանան դէպի արծիւը՝ այսինքն հոն, ուր նստած է կաթողիկոսը:

ԽՄԱՍՏՈՒՆ ԽՍՈՔ

Գործերդ Տիրող յանձնէ եւ քու ծրագիրներդ պիտի յաջողին: Որքան հարստանաս, ինքզինքդ միշտ խոնարհ պահէ եւ դուն չնորհ պիտի գտնես Տիրող առջեւ: Տէրը ամէն ինչ նպատակի մը համար ստեղծեց, իսկ ամբարիշտները պիտի կորսուին, երբ չար օրը գայ: Առակ 26.3-4



ԲՈՒ ԽՍՐՔԻ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 5 ՓԵՏՐՈՒԱՐ 2023 ԹԻՒ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 63.7-19: Բ. ՏՄ. 3. 1-12: ՅԻ. 6.22-38

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 6.22-38

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը տեսաւ, թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին, իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիրեհայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով, թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաւում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք ոչ թէ, որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ՝ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը, որ յաւիտեանական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Ռոդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր, որ ինք զրկեց»:

Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք: Ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»:

Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը, որովհետեւ Աստուծոյ տուած հացը այն է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան, որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթեցայ եւ ան, որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք, որ Հայրը ինձի կու տայ՝ ինձի պիտի գան, եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ, որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ՝ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ



Ս. Սարգիս Զօրավար Կապաղովկիոյ Գամիբրֆ գաւառէն էր: Քաջ եւ առաքինի զինուորական մը, որ զօրապետի աստիճանին հասաւ: Համարակութեամբ կը բարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բազմամեք:

Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիստոնէութիւնը ուրացած էր, գահ բարձրացաւ, Սարգիս իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան ապաստանեցաւ, Տիրան թագաւորի մօտ եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան, Պարսից Շապուհ թագաւորին մօտ՝ ծառայելով զինուորական ասպարէզին մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ զօրքին վրայ, որոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ դառնալով, Սարգիս եւ իր գաւազն արքայական հրաւեր ստացան գոհ մատուցանելու արքունի մեհեանին մէջ:

Սակայն Սուրբ Սարգիս նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կոտորելու: Առ ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին՝ զօրավարն ու իր որդին մահուան դատապարտուեցան:

Իր պարսիկ զինուորներէն տասնչորս անձեր, որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին, առին Սարգիսի մարմինը եւ մաքուր գգեստներով պատեցին:

Բայց թագաւորին հրամանով իրենք եւ զխատուեցան ու իրենց նահատակութիւնը եւս կը յիշատակուի ամէն տարի Սուրբ Սարգիսի եւ անոր Մարտիրոս գաւազնին յիշատակին հետ:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ ԻՆՉՊԷ՞Ս ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍԷՋ

Հայ Եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական: Ապաշխարութեան եւ խոստովանութեան եկողները ծունկի կու գան, իրենցմէ մէկը կը կարդայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զոյգումի աղօթքը, որուն մէջ յիշուած են կամայ եւ ակամայ գործուած բոլոր մեղքերը, իսկ քահանան մէջ ընդ մէջ կ'ըսէ. «Աստուած թողութիւն շնորհէ՛»: Զոյգումի աղօթքէն վերջ, քահանան «Որդումեցի Զեզ մարդասէր Աստուած» աղօթքը արտասանելով, Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները:

Հաւաքական խոստովանութենէն զատ, անհրաժեշտ պարագաներուն ապաշխարութեան եկողներ, կրնան առանձին ներկայանալ քահանային եւ խոստովանիլ իրենց մեղքերը եւ բարի խորհուրդներ ստանալ անկէ՝ մեղքի դէմ պայքարելու համար:

Հ Ո Ք Ե Ւ ՈՐ Պ Ա Տ Գ Ա Ս

Աստուած ներող Չայր է եւ արդար Դատաւոր

Շատեր կը հաւատան, որ Աստուած սիրող ու ներող ըլլալով՝ պիտի ներէ մեր մեղքերը: Ասիկա մեղքերու քաւութիւն ստանալու սխալ ըմբռնում մըն է, որ ընդհանրապէս կը գտնենք անոնց մօտ, որոնք կ'ուզեն փրկուիլ իրենց մեղքերէն առանց ընդառաջելու Քրիստոսի արեան յանձնուելու հրաւերին: Աստուած Հայր է: Այո՛, բայց արդար ու արդարութիւն պահանջող Հայր է: Իր արդարութիւնը իրագործուեցաւ իր Որդիին մահովը խաչին վրայ: Ուստի, ան մեզ կրնայ արդարացնել «Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցաւ» միայն (Հո. 3:24): Աստուած իր ներդրման վստահողներուն չէ, որ ներում կը շնորհէ, այլ՝ իր Որդիին քաւար արեան վստահողներուն:

ԱՍՏՈՒԾԱՆՇՈՒՆՉԸ

Այգին տարին միայն մէկ անգամ պտուղ կու տայ, իսկ Աստուածաշունչը տարուան բոլոր ամիսները եւ ամսուան բոլոր օրերը պտուղ կու տայ, անդադար կերպով կենսատու վարդապետութիւն բխեցնելով զայն քննողներուն: Երբ հողը կը հնձուի՝ կը սպառի, երբ պտուղը կը քաղուի՝ կը վերջանայ, մինչդէռ Աստուածաշունչը միշտ կը հնձուի եւ սակայն մեկնիչներ հոն միշտ կը գտնեն հասկ իրենց համար: Աստուածաշունչին այգին ամէն օր կը քաղուի, բայց հոն երբեք ողկոյզներ չեն պակսիր:

(Եփրեմ Խուրի Ասորի)

ԵԹԷ ԿԱՍ, ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ ԱՆՍՊԱՆՈՎ ԿԸ ԶԳԱՍ, ԱՍՏՈՒԾ Է ՔԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԸ: ԱՂՕԹԷ ԵՒ ԳԻՍԷ ԻՐԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԷ ՔԵԶ:

Սաղմոս 5

Ո՛վ Տէ՛ր, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծանքներս:

Մտի՛կ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ քեզի:

Ո՛վ Տէ՛ր, առտու կանուխէն լսէ՛ կանչս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ: Հպարտները չես հանդուրժեր, եւ կ'ատես անօրէնութիւն գործողները սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուխս, ով Տէր: Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝ քու Տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, քու նամբադ հարթէ՛ իմ դիմացս, որպէսզի թշնամիներս տեսնեն, որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն, բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ո՛վ Աստուած, անոնց յանցանքին պատիժը տուր, իրենց խորհուրդները թող կործանեն զիրենք: Մերժէ՛ զիրենք իրենց ամբարիշտութիւններուն համար, որովհետեւ քեզի դէմ ըմբոստացան:

ՍՍՂՄՈՍԱԳԻՐՔ